

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչփով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ
30 JUL 2010 73
38-17

ՇՈԳԵԿԱԹՍԱՆԵՐԻ
ՍՊԱԾՈՐԿՄԱՆ
ՀԱՅՑ ՅԵՎ ՊԱՏԱՄԱՆՆԵՐ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԻНСТИՏՈՒՏԱ
ԵՍՏՈՆԻԱԴԵԼԻ
Ակադեմիա Խուն
СССР

621
T-77

ՅԵՐԵՎԱՆ

— 1931 —

621.

2. 77

ՀԱՐՑ ԹԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

1. Ինչ բան ե շոգեկաթան:

Դա ամեն կողմից փակ մի աման ե մետաղից շինված, վորի մեջ ջուրը տաքացվում ե վառելապնութի գաղերով:

Շոգեկաթսան ունի իր առանձին հնոցը, վորտեղ լառելանյութը վառելով տալիս ե տաք գաղեր:

2. Վորոնիք են կոչվում ֆիզիկական մարմիններ և նրանք բանի վիճակի յեն լինում

Այն բոլոր առարկաները, վորոնք բնության մեջ տեղ են բռնում, կոչվում են ֆիզիկական մարմիններ: Ֆիզիկական մարմինները լինում են 3 վիճակի՝ կարծր, հեղուկ և գաղային:

3. Վորոնիք են կոչվում պինդ, հեղուկ և գաղային մարմիններ

Այն մարմինը, վորի ամենափոքր մասնիկները իրար հետ խիստ են միացած և ունեն մի վորոշ ձև և այդ ձեվը փոխելու համար գործածում ենք մի վորոշ ուժ, կոչվում ե պինդ մարմին:

Այն մարմինները, վորոնց ամենափոքր մասնիկ-

15 JUL 2013

10125

ները իրար հետ թույլ են միացած և ձգտում են
թափկել, չեն կարող, պաշտպանել իրենց ձեր,
կոչվում են հեղուկ մարմիններ :

Այն մարմինները, վորոնց ամենափոքր մասնիկ-
ներն առանց կողմնակի ուժի ձգտում են հեռանալ
միմյանցից և վորոնց ձեւք կարելի յե պաշտպանել
փակ ամանում, կոչվում են գաղային մարմիններ :

4. Ինչ և հասարակ և բարդ մարմինը

Այն մարմինը, վորի ամենափոքր մասնիկները
ունեն նույն Փիզիկական հատկությունները ինչ-
պիսին ունի նույն տեսակի մեծ մարմինը, կոչվում
է հասարակ մարմին :

Այն մարմինները վորոնք բաղկացած են մի
քանի հասարակ մարմիններից, կչվում են բարդ
մարմիններ :

5. Վարոնիկ են կոչվում մեխանիկական խառ-
նուրդներ և վորոնիկիմիական

Մի քանի Փիզիկական մարմիններ միմյանց
խառնուրց հետո, յեթե նոր ստացած մարմնի խառ-
նուրդները կարող ենք վորոշել չոշափելիքով գիտո-
ղությամբ կամ հոտառությամբ, այդպիսի խառ-
նուրդը կոչվում է մեխանիկական խառնուրդ : Ո-
րինակ ջուրը խառնվելով դինու հետ՝ մենք զգում
ենք այդ խառնուրդը թե ճաշակելիքով և թե տե-
սողությամբ :

Մի քանի հասարակ մարմիններ միմյանց հետ
միանալով՝ կազմում են մի նոր բարդ մարմին, վա-
րը վոչ մի նմանություն չունի միացած հասարակ
մարմիններին : Այդպիսի խառնուրդը կոչվում և
քիմիական խառնուրդ : Որինակ, ջուրը բաղկացած
է 2 հասարակ մարմիններից՝ 11 մաս ջրածնից և
89 մաս թթվածնից :

6. Ինչ և որը և ինչից ե կազմված

Որը գաղային բարդ մարմին է, վորը բաղկա-
ցած և թթվածինից և ազոտից : Ողի 23 տոկոսը
կազմում է թթվածինը, 77 տոկոսը կազմում և ա-
զոտը :

7. Հասարակ մարմինները : Թթվածինը, զրա-
ծինը, ազոտը, ծծումբը, ածխածինը, դեղին
յերկարը և նրանց հատկությունները


Թթվածինը այնպիսի մի անգույն գազ է, վոր
ինքը չի այրվում, բայց այրմանն ուժանդակում է :

Զրածինը մի այնպիսի անգույն գազ է, վոր
ինքը այրվում է, բայց այրմանը չի ուժանդակում :

Ազոտը այնպիսի մի անգույն գազ է, վոր վոչ
ինքն և այրվում և վոչ ել այրմանն ուժանդակում :

Ծծումբը գեղնագույն հասարակ մարմին է,
վորը փոքր տոկոսով գոյություն ունի վառելանյու-
թերի մեջ 1-2 տոկոս վառվելիս միանում է ողի
թթվածնի և ջրային մասնիկների հետ, վորովհե-

56929.66



տեղ ջրային մասնիկներն այրվելուց հետո առանձնացնում են ջրածինը, վորը վառվելիս վառելանյութի ջրային մասերի հետ տալիս և ծծմբաթթվում և փորը քայլայում և յերկաթը:

Ածխածինը դա հասարակ մարմին է, վորին մաքուր և սինդ վիճակում մենք հանդիպում ենք բնության մեջ ինչպես ալմազը և գրաֆիտը, սաժը. նա ամեն մի վառելանյութի գլխավոր մասն է կազմում և վորից վառելանյութի մեջ դանվում է 49-86 տոկոսով:

8. Ինչ է գծային չափը: Վորն ե նրանց միավորը: Վորոնիք են յերկարության չափերը.

2 կետերի մեջ ընկած տարածությունը չափելու համար գործածում են գծային չափեր: Յերկարության չափերի միավորը հավասար է 1 մետրի, 1 կիլոմետրը հավ. 1000 մետրի, 1 մետրը հավ. 100 սանտ., 1 սանտ. հավ. 10 միլիմետրի:

9. Վորոնիք են կոչված բառակուսի չափեր և վորն ե նրանց միավորը

Վորոնիք մի մակերես չափելու համար գործածում են քառակուսի չափեր. քառակուսի չափերի միավորը հավասար է 1 քառակուսի մետրի. դա այն քառակուսին է, վորն ունի չորս հավասար կողմեր և ամեն մի կողմի յերկարությունը հավասար է 1 մետրի, 1 քառ. մետրը հավասար է 100 ս. բազմ.

100 ս. հալ. 10.000 քառակուսի սանտ., 1 քառ. սանտ. հավ. 10 մ. բազմ. 10 մ. բազմ. 100 ք. միլիմետրի:

10. Ինչ բան է ծավալը և խորանարդ չափը

Վորոնիք առարկայի բոնած տարածությունը բնության մեջ դա նույն առարկայի ծավալն է:

Այն չափը, վորով չափում են վորոնիք ծավալ՝ կոչվում է խորանարդ չափ. խորանարդ չափի համար ընդունված է վորպես միավոր 1 խորանարդ մետրը: 1 խորանարդ մետրը ունի 6 հավասար կողմերը, վորոնցից յուրաքանչյուրը հավասար է 1 մետրի: 1 խորանարդ մետրը հալ. 100 ս. բազմ. 100 ս. բազմ. 100 ս. հավասար է 1 միլ. ք. խոր. ս.: 1 խոր. սանտ. հավասար է 10 մ. բազմ. 10 մ. բազմ. 10 մ. հավասար է 1000 խորանարդ միլիմետրի:

11. Ինչ բան է յերկրագնդի գնդական ուժը, ինչ է ծակերտվությը, բաշը և նրանց միավորը վորն ե.

Մենք գիտենք, վոր յերկրագնդը ունի ձգողական ուժ: Յեթե մի առարկա գցեք վերեկ նա նորից ներքեւ կընկնի՝ յերկրագնդի վրա: Սա բացատը վում է յերկրագնդի ձգողական ուժով:

Այն ուժը, վորով յերկրագնդը առարկային քաշում ե իրեն՝ կոչվում է ծանրություն:

Ամեն մի մարմին ունի վորով ծանրություն,

Վորը կոչվում է նույն մարմնի քաշը : Քաշերի միաւ-
վորը ընդունված է 1 կիլոգրամը : 1 տոննը հավաս-
ար է 1000 կիլոգրամի, 1 կիլ. հավասար է 1000
գ., 1 գրամը հավասար է 1 խ. և 4 աստ. Յ ջրի
քաշին ծովի մակերեսից :

12. Ինչ է նշանակում տեսակարար քաշը և ինչի յե
հավասար տեսակարար քաշերի միավորը

Տեսակարար քաշը նշանակում է թե քանի ան-
գամ վորեվե մի առարկա ծանր և կամ թեքի և
նույն ծավալով վերցրած միավորի համեմատու-
թյամբ :

Տեսակարար քաշերի միավորը հավասար է 1
խ. անտիմետր ջրին փերցրած $4^{\circ}\beta$. տաքության
ծովի մակերեսից . հեղուկ և պլնող մարմնների
քաշերը համեմատում են ջրի տեսակարար քաշի
հետ, վորպես միավոր : Խսկ գաղային մարմինները
համեմատում են ողի հետ, վորպես միավոր :

13. Ինչ է զերմուքյունը և ինչի յե հավասար
զերմուքյան աստիճանը

Այն տաքությունը կամ ցրտությունը, վորը
մենք զգում ենք վորեւ մի առարկա շոշափելիս,
կոչվում է ջերմություն : Վորեւ առարկայի հաղոր-
դած ջերմության քանակը՝ դա նրա ջերմության
առտիճանն է :

14. Ի՞նչ է կալորիան և ինչի յե հավասար ,

Կալորիան՝ դա ջերմության միավոր է, վոր
կարող է 1 կիլոգրամ ջուրը տաքացնել $1^{\circ}\beta$:

15. Ինչ է զերմաչափը : Տելսիուսի զերմաչափի
հիմնական կետերը, վորոնք են և ինչի՞ համար են
գործածում սոնդիկը

Զերմաչափը դա մի գործիք է, վորով մենք չա-
փում ենք վորեվե մի առարկայի ջերմության աս-
տիճանը : Զերմաչափը ունի 2 հիմնական կետեր .
սառուցի հարթան կետ, վորը հավասար է $0^{\circ}\beta$. և
յեռման կետ՝ վորը հավասար է $100^{\circ}\beta$:

Վորովհետեւվ սնդիկը նկատելի կերպով տա-
քությունից կամ ցրտությունից շատ շուտ փոխում
է իր ծավալը, այսինքն տաքանալիս լայնանում է,
իսկ ցրտությունից՝ կծկվում, դրա համար ել ջեր-
մաչափի համար սնդիկ են գործածում :

16. Ինչ է պիրումետրը և ֆանի տեսակ պի-
րումետրներ կան

Պիրումետրը դա մի գործիք է, վորով չափում
են 350° բարձր տաքությունները : Ունենք յերկու
տեսակ պիրումետրներ՝ հասարակ և տերմոնելեկտրի
չեսէկ պիրումետր : Դա շինված է 2 հասարակ մե-
տաղներից՝ սուրբմաից և բիսմութից : Մըանք զանա
զան շերտերով միացուծ են միթյանց՝ կաղմելով մի

մետաղյա սյուն։ Սյունի ծայրին միացած են ելեկտրական լարեր։ Յերբ ջերմությունը հաղորդվում է այդ մետաղյա սյունին, ստացվում է ելեկտրականություն և ջերմության աստիճանին համապատասխան ելեկտրական ուժ և ստացվում լարերում, վորով մենք չափում ենք առարկայի ջերմության աստիճանը։

17. Ինչ ե շոգու գոյացումը և ինչի յ հավաքը 1 մքնուրուացող ննշումը

Յերբ վոր ջրի ջրմության աստիճանը հասնում է 100°C ., այն ժամանակ ջրի մակերեսին յիշեռում են բջտիկներ, վորոնք աղասովելով ջրի մակերեսից, բարձրանում են վերև, դա արդեն չողու դոյանաւում ե։

Մինուրուային ճնշումը հավասար է 1 կիլո քաշի 1 քառ. սանտ. վրա։ Յեթե մենք վերցնենք մի խողովակ 1 քառակուսի սանտիմետր մակերեսով և լցնենք այդ խողովակի մեջ սնդիկ, մենք կտեսնենք, վոր խողովակի քակ կողմը բարձրանում է 76 սանտիմետր ավելի՝ քան բաց կողմը, վորի վրա ճնշում և մինուրուաը վորովհետեւ այդ 76 սանտիմետր սյունի մեջ յեղած սնդիկի քաշը հավասար է 1 կիլոգրամի. դրա համար ասում ենք ճնշում և 1 քառակուսի սանտ. վրա 1 կիլոդրամ ուժով։

18. Վորն ե բանվորական ճնշումը և վարն ե բացարակ ճնշումը

Բանվորական ճնշումը այն ճնշումն է, վարը ցույց է տալիս մանոմետրը. նա առհասարակ մեկ ատմասաֆերով պակաս և ցույց տալիս քան թե ընդհանուր ճնշումը կաթսայի մեջ։

Բացարձակ ճնշումը 1 ատմասաֆերով ավել ե քան թե այն ճնշումը, վորը ցույց է տալիս մանոմետրը։

19. Ինչ գլխավոր և անհրաժեշտ մասեր ունեն շոգեկաքսաները

Նայել պատասխանը հայերեն դրքի մեջ 13-րդ յերեսը և կարգալ 1, 2 և 3 կետերը։

20. Շոգեկաքսաների վարտեղի են հարմարեցնում հենցը և ինչու համար

Շոգեկաթսայի հնոցը հարմարեցնում են վառուելանյութի տեսակին և կառուցում են շոգեկաթսայի դուրսը կամ ներսը։

21. Ինչ ձեվով են տաքացնում շոգեկաքսայի ջուրը վառելանույրի գագերը

Վառելանյութի գագերը հաղորդվում են շոգեկաթսայի ջրին I ճառագայթման միջոցով հնոցումը և II չիման միջոցով ծխանցքներում։

22. Ինչ բան է շոգեկաքսայի տաքացման մակերեսը և ինչ չափերով են չափում շոգեկաթսայի այն մասը, վոր մի կողմեց

շփվում ե գաղերով, իսկ մյուս կողմից շրջապատճած ե զբով, կոչվում ե չողեկաթսայի տաքաշման ժակերես. չողեկաթսայի տաքաշման մակերեսը չափում են քառակուսի մետրով:

23. Քանի տեսակ ագում կա և նրանց քատրությունը

Զդումը լինում է բնական և արհեստական :

Այն ձգումը, վորը առաջ ե գալիս մթնոլորտի տարբեր ճնշումից չողեկաթսայի և հնոցի մեջ՝ կոչվում է բնական :

Իսկ արհեստականը՝ դա այն ձգումն է, վորը ստեղծվում է արհեստական կերպով, այսինքն վեհափելյաստորի միջոցով:

24. Քանի տեսակ սողնակներ կան և նրանց դերը

Սողնակները լինում են շարժական և պտուտակածեն. նրանց գլխավոր դերը կայանում է նրանում, վոր կարգավորում են ձգումը:

25. Ինչի համար են ծառայում վորմնապատումը և ծխանցքները

Վորմնապատումը շինված ե վատ հաղորդիչ նյութից, վորը թույլ չի տալիս տաքությունը անտեղի կորչելու: Յացի դրանից, վորմնապատումի մեջ շինված են լինում ծխանցքները, վորոնց գլխավոր դերը նրանում ե, վոր ոպտագործում են տաք դաղերը՝ անցկացնելով մի քանի ծխանցքներով:

26. Ինչ ե հագեցած շոգին և ինչ ե զերացնի շոգին

Չողեկաթսայի մեջ այն չոգին, վորը իր մեջ պարունակում է ջերային մասնիկներ և նրա ջերայության աստիճանը կախված է ճնշման քանակից և վորը ցույց է տալիս մանոմետրը հետեւյալ թվերով:

Որինակ մանոմետրը ցույց է տալիս ճնշումը գոլորշու 1 ատմ. ջերմության աստիճանն է 120°C . մանոմետրը ցույց է տալիս ճնշումը 2 ատմ. ջերմության աստիճանն է 133°C . ահա այս ձեվով շոգին կոչվում է հագեցած չոգի:

Իսկ այն շոգին, վորի ջերմության աստիճանը և ճնշման քանակը չունի այս թված կազմը, կոչվում ե գերազեռիչ գոլորշի: Գերազեռիչ գոլորշին ստացվում է հաղեցած շոգին գերազեռացվելուց, այսինքն տաքացնելուց հետո:

27. Ինչ ե գոլորշիացման քագնված ջերմությունը

Այն ջերմությունը, վորը ջրի յեռման ժամանակ ջերմաչափը 100°C . ավելցույց չի տա բաց ամանում և այդ ջերմությունը ոգտագործվում է ներքին աշխատանքի համար, կոչվում ե գոլորշիացման թագնված ջերմություն:

28. Քանի տեսակ վառելանյութեր կան և
նրանց հատկությունները

Փայտը վորպես վառելանյութ գնահատվում
է չորությամբ, խտությամբ. 1 կիլո փայտը դոլոր-
շիացնում է $2\frac{1}{2}$ — $3\frac{1}{2}$ կ. ջ., տորֆը գնահատվում
է վորպես վառելանյութ իր չորությամբ և քիչ մո-
խիր ունենալու հատկությամբ:

1 կիլո տորֆը դոլորշիացնում է $2\frac{1}{2}$ —4 կ. ջուր.
քարածուխը գնահատվում է վորպես վառելա-
նյութ չորությամբ և նրանով, վոր յեթե իր մեջ
են և պարունակում մոխիր և ծծումբ: 1 կիլո քա-
րածուխը գոլորշիացնում է $2\frac{1}{2}$ — $9\frac{1}{2}$ կիլո ջուր:

Մազութը վորպես վառելանյութ լավ և
գնահատվում. 1 կիլո մազութը գոլորշիացնում
է 10—13 կիլո ջուր:

29. Ինչ բան ե վառելանյութի ջերմարար ըն-
դույնակությունը

Դա նշանակում է՝ թե քանի կալորիա ջերմու-
թյուն և արտադրում 1 կիլոգրամ վառելանյութը
միվ այրվելուց հետո:

30. Ինչպես ե կատարվում այրման պրոցեսը
հնոցի մեջ: Վառելանյութի բռնկման աստիճանը.
լրիվ և ոչ լրիվ այրումը. որի ժամանակը այրման
համար: Վառելանյութի շերտի հատկությունը:

Պատասխանը նայել հայերևն դրքի մեջ 10-րդ
յերեսը և կարդալ այրումը լրիվ:

31. Հնոցի տեսակները հարիզանական և քեք
կրակավանդակենրով. նրանց հատկությունը.

Հորիզոնական կրակավանդակով հնոցների յեր-
կարությունն է 2 մետր, լայնությունը՝ 1 մետր:
Նրա լավ կողմն այն է, վոր նա շինված է հասարակ
և կարելի յէ հարմարեցնել ամեն մի շողեկաթսա-
յին: Պակասությունը այն է, վոր վառելանյութը
ներս տալու ժամանակ, բացվելով հնոցի դռնակը
ներս և մտնում մեծ քանակությամբ ող, վորը ա-
ռաջ և բերում մեծ ջերմության տարրեցություն...
II վառելանյութը միանգամից լցվելով խեղդում
և կրակը, վորի պատճառով առաջ և գալիս վոչ
լրիվ այրում: Թեք կրակավանդակով հնոցի լավ
կողմն այն է, վոր դռնակը չի բացվում և վառե-
լանյութը հալասար ներս և զնում, վորի պատ-
ճառով այրումը կատարվում է լրիվ:

Վատ կողմն այն է, վոր կրակավանդակը դըժ-
վար և մաքրել խարումից:

32. Աստիճանավոր յեվ մեխանիկորեն տրվող
վառելանյութերի հնոցների հատկությունները

Աստիճանավոր կրակավանդակի լավ կողմն
այն է, ինչ վոր թեք կրակավանդակովինը: Պակա-
սությունը այն է, վոր աստիճանների վրա մնացած
մոխիրը և խարումը ավելի յէ դժվար մաքրվում
քան թեք կրակավանդակովինը:

Վառելանյութը մեխանիկորեն տրվող հնոցների լավ կողմն այն ե, վոր վառելանյութը վանդակի վրա հալասար կերպով է փոլում. դրա համար այրումը կատարվում է լրիվ: Վատ կողմն այն ե, վոր ամեն վառելանյութ չի կարելի գործածել, վառելանյութը պետք է լինի մի չափի ջոկված:

33. Շարժական, շախտային և հեղուկ վառելանյութերի հնոցների լավ և վաս կողմերը

Շարժական հնոցի լավ կողմն այն ե, վոր վանդակը մաքուր և լինում և հարկ յեղած զեղաքում կարելի յե գուրս քաշել. համեմատած մյուս հնոցների հետ՝ վատ կողմ չունի:

Շախտային հնոցների լավ կողմն այն ե, վոր հնարավոր և գործածել այնպիսի վառելանյութ, վորոնք իրենց մեջը պարունակում են մեծ քանակությամբ խոնավություն և հնոցի մեջ ավելորդ ող չի մտնի:

Հեղուկ վառելանյութերի հնոցների լավ կողմն այն ե, վոր նրանց սպասարկել շատ հեշտ է: Այրման կարգավորելը ևս հեշտ է. մոխրանոցի կարիք չունի և այրումը կատարվում է լրիվ ձեռումը ճիշտ կարգավորելու զեղքում:

34. Ծոգեկարսաների տեսակները—գլանածն և բատարեյնի կարխաների ձեւը

Այն կաթսաները, վորոնք բաղկացած են մի գլանից, կոչվում են գլանածն կաթսաներ: Գլա-

նածն կաթսաների հնոցը դանվում է կաթսալի տակը: Ցաք կաղերը անցնում են մեկ կամ մի քանի ծխանցքերով: Լավ կողմն այն ե, վոր ունեն մեծ ջրային տարածություն, ինքը թանգ չի գնահատվում: Պահանությունը այն ե, վոր վորմնապատումը թանգ արժե:

Մի քանի գլանածն կաթսաներ, վորոնք միացած են միմյանց կարմ խողովակներով, կոչվում են բատարեյնի կաթսաներ: Վատ և լավ կողմը նույն է, ինչ վոր հասարակ գլանածն կաթսաներները: Աւելին մեկ հնոց, ծխանցքերը լինում են հորիզոնական կամ ուղղաձիր:

35. Կառնավալյան շոգեկարսան յել լանկաշիրյան

Դա այն գլանածնիվ կաթսան ե, վոր ունի իր մեջ մի գլան, ծառայում և վորպես հնոց: և առաջն ծխանցքը. վատ և լավ կողմերը նույն են, ինչ վոր հասարակ գլանածնիվ կաթսաներները:

Լանկաշիրյան շոգեկաթսան՝ դա այն գլանածն շոգեկաթսան ե, վորն ունի իր մեջ յերկու գլան. ծառայում և վորպես հնոց և վորպես առաջին ծխանցքներ. դրա ջրի մակերեսը մեծ է. տալիս և չոր չորի: Լավ և վատ կողմերը նույն են ինչ վոր հասարակ գլանածն շոգեկաթսաներները:

36. Լոկոմոբիլի կարսաները
ԻՆՉՐԻԿԱ
Դա այն գլանածն կաթսաներն են: վորոնք

ունեն գլանաձև հնոց և ծխախողովակներ. ծխախողովակները կատարում են ծխանցքի դեր, վորոնք գտնվում են ջրի տարածության մեջ։ Հալ կողմն այն ե, վոր չնայած իր փոքր ծավալին, ունի մեծ տաքացման մակերես, արտադրում է մեծ քանակությամբ շոգի։ Վատ կողմն այն ե, ինչ վոր ունի փոքր ջրային տարածությունով շոգեկաթսան. հարկավոր և շուտ-շուտ ծխախողովակները մաքրել մրից։

37. Վերտիկալի ջրախողովակավոր շոգեկաթսաները յեկ հորիզոնական ջրախողովակավոր
կաթսաները

Այն շոգեկաթսաները, վորոնք ունեն թե վերելում և թե ներքելում գլաններ և միմիանց հետ միացած են ջրախողովակով։ Վերևի գլանը ունի ջրային տարածություն և թե շողիատուն։ Լավ կողմն այն ե, վոր ունի մեծ տաքացման մակերես և շուռքարը քիչ և նստում չնորհիվ նրա վերտիկալ խողովակների դրության։ Նրա մյուս հատկությունները նույնն են ինչ վոր փոքր ջրի տարածություն ունեցող շոգեկաթսաներինը։

Այն շոգեկաթսաները, վորոնք ունեն ներքելում մի քանի հորիզոնական ջրախողովակներ, իսկ վերելումը մի գլան ջրի և շոգու տարածությունով և վորոնք միմիանց միացած են ջրային կարճ խողովակներով, կոչված են հորիզոնական

ջրախողովակավոր շոգեկաթսաներ. լավ կողմն այն ե, վոր ունի մեծ տաքացման մակերես. պակասությունն այն ե, վոր շոտոքարը շատ ե նստում ջրախողովակների մեջ, վորը մաքրելու համար անհարմար ե։

38. Ինչ արմատուրա ունի շոգեկաթսան յեկնարկը դերը

Նայել հայոց գրքի մեջ 16-րդ յերեսը յեկ շոգեկաթսայի արմատուրան լրիվ։

39. Կաթսաների սինդող ջրի հատկությունը, շուռքարի հետեւկանքը և նրա դեմ պայքարելու միջոցները

Կաթսան սննդող ջուրը պետք է լինի փափուկ. իր մեջ չպիտի ունենա կեղու և հանքային մասնիկներ քիչ քանակությամբ։

Շտուքարի հետեվանքը այն ե, վոր իրը վատ հաղորդիչ լավ չի հաղորդում տաքությունը ջրին, վորի պատճառով շտուքարը յեղած տեղում կաթսան նորմայից շատ ե տաքանում և վորի հետեւվանքով յերկաթը ուռչում և թուլանում ե. այդպիսի դեպքերում շոգեկաթսան պայթում ե։

Շոգեկաթսան շուտ-շուտ պետք ե մաքրել շտուքարից. ջուրը պետք ե մաքրել կեղտից, շտուքարը քիչ նստելու համար դորձածում են սոդա. շտուքարը պատերից հեշտ պոկելու համար դոր-

ծածռմ են նավթ կամ ոև ձութ. շտուքարը մաքրելու համար—պետք է չողեկաթսան բոլորովին սառցնել, վորից հետո հնարամոր կլինի շտուքարը մաքրել:

40. Ինչի համար են գործածում եկանումայց զերք և պաղաքիվատելը

Պաղաքրեվատելը և եկոնոմայզերը գործածում են նրա համար, վոր մինչեվ կաթսան սննդելը, այլպիսիների ջուրը տաքացնել, աշխատած գոլորչով կամ ողտագործված գաղերով, տաքացնում են աննիշ ջուրը նրա համար, վոր առաջն՝ աղատում ենք ջրի միջի ողը, II վառելանյութի խնայողության պատճառով:

Եկոնոմայզերը զա մի գործիք և, վորով մենք տաքացնում ենք ջուրը՝ ողտագործված տաք գաղերով:

Իսկ պաղաքրեվատելը այն գործիքն է, վորով մենք ջուրը տաքացնում ենք աշխատած գոլորչով:

41. Հնցապսիի պարտականությունները:

Կարդալ հայոց գիրքը 20 յերեսը լրիվ:

42. Շոգեկարսան աշխատանիքի համար պատրաստելը

Կարդալ հայոց գրքի՝ 23—24—25 յերեսները:

43. Շոգեկարսան աշխատանիքի զցելը

Կարդալ հայոց գիրքը 25—26—27 և 28 յերեսները լրիվ:

20

44. Հնցի հսկելը պինդ վառելանյութի համար

Կարդալ հայերեն գիրքը 34—35—36 յերեսները

45. Հնցի հսկել հեղուկ վառելանյութի համար կարդալ հայերեն գիրքը 30—31 և 32 յերեսը 10 տող վերեվից:

46. Հնցի կարգավորումը նրա աշխատանիքի ժամանակ

Կարդալ հայերեն գրքի 32—33—34 յերեսները:

47. Շոգեկարսայի աշխատանիքի ընդհատելը:
Կարդալ հայերեն գիրքը 34—35—36 յերեսները լրիվ:

48. Շոգեկարսայի մաքրելը

Կարդալ հայերեն գիրքը 36—37—38—39 յերեսները լրիվ:

49. Շոգեկարսայի սպասավորելը նրա աշխատանիքի ժամանակ

Կարդալ հայերեն գիրքը 39—40 յերեսները:

50. Նույն հարցը շարումակել

Կարդալ հայերեն գիրքը 41—42 յերեսները:

51. Նույն շոգեկարսայի սպասավորումը աշխատանիքի ժամանակ .

Կարդալ 51—52 յերեսները:

52. Նույնի շարունակությունը՝ շոգեկաքսայի սպասավորումը :

Կարդալ 45—46 յերեսները :

53. Շարունակությունը՝ շոգեկաքսայի սպասավորումը .

Կարդալ հայերեն գիրքը 49—50 յերեսները :

54. Շարունակությունը կարդալ շոգեկաքսայի վկայագրելը :

Կարդալ 51—52 յերեսները :

55. Յերկյուղակի յերեվույթներ կաքսայի աշխատանքի ժամանակ .

Կարդալ հայերեն գիրքը 56—57—58 և 59 յերեսները :

56. Նույն դասը շարունակել

Կարդալ հայերեն գիրքը 60 և 61 յերեսները ու վերջացնել :


57. Դժբախտ պատահարներ մարդկանց վերաբերմամբ կարողն մաքրելիս .

Կարդալ հայերեն գիրքը 62—63—64 և 65 յերեսները և վերջացնել :

ՀՀ Ազգային գրադարան



NL0281322



10125

1
2

907

Библиотека
института
известководелия
академии наук
СССР